



ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆԵ

ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՐԱԲԵՐԵՆ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍՆԵՐԸ



այոց քրիստոնեութիւնը ընդունելու պատմութիւնը մեզ հասել է մի հին պատմական հիշատակարանով, որ կրում է վերնագիր՝ «Ագաթանգեղեայ պատմութիւն, վարք և պատմութիւն սրբոյն Գրիգորի»։ Անծանոթ հեղինակն իր մասին վկայում է, թե ինքը Հռոմ քաղաքից է, խոսքով թագավորի ժամանակ եկել է Հայաստան, արքունիքում ծառայել իբրև քարտուղար և ապա Տրդատի հրամանով գրել է հայոց դարձի պատմութիւնը իբրև ժամանակակից և ակնհայտ։ Նա պատմում է, թե պարսիկ իշխան Արտաշիւր Սասանյանն սպանելով պարսից Արտափան թագավորին, որ Պահլավունի ցեղից էր, ինքն է թագավորել։ Հայոց խոսքով թագավորը, որ իբրև Արշակունի, նույն Պահլավունի ցեղիցն էր, վրեժխնդիր է լինում իր ազգակից Արտափանի համար և արշավելով Պարսկաստան՝ Արտաշիւրի դեմ, նրան նեղել է ձգտում փախցնում մինչև Հնդկաստան։ Այս տեղում է տաւր տարի։ Արտաշիւրը գրավել խոստումներ է անում իր մեծամեծներից նրան, որը կկարողանար սպանել խոսքովին։ Այդ բանը հանձն է առնում մի տարիշ պահլավունի իշխան, Անակ անունով։ Նա իբրև կեղծ փախստական, իր տոհմով փախչում է Հայաստան։ խոսքովն ուրախանում է իր ազգակցի փախուստով։ Մոտ երկու տարի հետո Անակը դավաճանորեն ապանում է խոսքովին։ Հայ նախարարները բնաջինջ են անում նրա աղքատօճմը. ազատվում է միայն մի ծծկեր Երեխա, որին դայակը փախցնում է Կեսարիա։ Այստեղ նա մեծանում է քրիստոնեական հավատով, Գրիգոր անունով և ամուսնանալով ունենում է երկու որդի։

Արտաշիւրը խոսքովի սպանութիւնից հետո արշավում և տիրանում է Հայաստանին,

բնաջինջ անելով խոսքովի ամբողջ ընտանիքը, միայն մի փոքրահասակ մանուկ՝ Տրդատ անունով, կոտորածից ազատվելով գնում է Հռոմ, մտնում զինվորական ծառայության և մեծամեծ քաջագործություններ գործում։ Այս ժամանակները նրա մոտ է գալիս՝ իբրև սպասավոր, Կեսարիայում ապաստանած Անակի որդին՝ Գրիգորը։ Դիտկւեախանոս կայսրը Տրդատին, մեծ քաջագործութիւնների համար, Հայաստանի թագավոր է նշանակում և նրա տրամադրութեան տակ զորք ղեկավարում։ Տրդատը մտնում է Հայաստան. Արտաշիւրը փախչում է։ Սահմանամերձ Երիզա գոտւում Տրդատը գահաբերութիւն է անում Անահիտ աստվածուհուն և Գրիգորին էլ հրամայում է նույնը անել։ Բայց Գրիգորը հրաժարվում է՝ հայտնելով՝ թե ինքը քրիստոնյա է և անպատկամ է կուռքերը։ Տրդատը զանազան սպառնալիքներով և տառնուէրոս տանջանքներով ստիպում է նրան՝ ուրանալ իր հավատը, բայց իզուր։ Այդ ժամանակ մի նախարար հայտնում է Տրդատին, թե Գրիգորը ոչ այլ ոք է, քան խոսքովին սպանող Անակի որդին։ Անմիջապես Գրիգորին կապում, ուղարկում են Արտաշատի բերդի օձերով լի մութ բանտը (Նոր Վիրապ), ուր ընկնողը նույն օրը մեռնում է։ Մի պառակ կին, հրեշտակի պատկերով, ամեն օր գաղտնի հաց և ջուր էր տալիս բանտարկյալին, որն այդ վիրապում ապրում է 13-15 տարի։

Այսքան տարիներ անցնելուց հետո Հռոմից Հայաստան են դալիս մի խումբ քրիստոնյա կույսեր, որովհետև Դիտկւեախանոս կայսրը ցանկանում էր այդ կույսերից մեկին՝ գեղեցկուհի Հովսիսիմեի՝ իրեն կին առնել։ Դիտկւեախանոսի հրովաքտակի հիման վրա Հայաստանում կույսերին փնտռել են սկսում։ Նրանց գտնում են Վաղարշապատի այգիներից մեկում, մի հնձանում ապավինած։ Երբ Տրդատին հաղորդում են

Հոփսիսիմի աննման դեղեցկության մասին, նա կամենում է ինքը նրան կին առնել և պատվիրում է Հոփսիսիմին փառավոր պատվով բերել արքունիք: Հոփսիսիմին հրաժարվում է դնալ, նրան տանում են ստիպմամբ. պալատում Հոփսիսիմին ինն ժամ կռվում է հակազդող Տրդատի հետ, ուժասպառ անում նրան ու փախչում պալատից: Կատաղած ու ամոթահար Տրդատը հրամայում է սպանել նրան և նրա ընկերուհիներին: Սպանվում է 37 կույս:

Սգավոր թագավորը սխալվելու համար մի քանի օրից հետո ուղում է տրսի գնալ: Կառք նստելու ընթացին վրան մի տեսակ կատաղություն է գալիս. դուրս է նետվում

կառքից, փախչում դեպի դաշտերը, գահանների կերպարանք է ստանում, խոզի նման կճղակներով, դնչով ու ոտներով քանդում և ուտում է վայրի բույսեր: Նման հարվածների են ենթարկվում նաև պալատականներից շատերը. սուգ է բռնում ողջ Հայաստան աշխարհը: Հրեշտակը իջնում և թագավորի քրոջ Խոսրովի դուստին հայտնում է, թե այդ հարվածները բժշկվել կարող են միայն Արտաշատում բանտարկված Գրիգորի ձեռքով: Երբ Խոսրովի դուստր այս տեսիլը պատմում է իշխաններին, շին հավատում, որովհետև վիրապն ջնկած մարդը մի օրում պետք է մեռած լիներ ու կարծում



Խոր Վիրապի վանքը

են, թե Խոսրովի դուստն էլ է հարվածի ենթարկվել. բայց տեսիլը կրկնվում, երեքնվում է սպառնալիքներով: Մարդ են ուղարկում Արտաշատ. տեսնում են Գրիգորը կենդանի է. հանում են Վիրապից, լվանում, հագցնում և բերում Վաղարշապատ: Գահանացած Տրդատը ճանապարհին գալիս չոգում է նրա առաջ և խնդրում ներել իրեն գործած հանցանքների համար: Վաղարշապատում Գրիգորը ամենից առաջ հոգ է տա-

նում թաղելու նահատակված կույսերի մարմինները, որ անարատ էին մնացել ութ օր, և վկայարաններ է շինում նրանց վրա: Հետո սկսում է քարոզել քրիստոնեության սկզբունքները և ապա հետզհետե բժշկում է թագավորին, որը վերստանում է նախ բանականությունը, հետո ոտքերն ու ձեռքերը, ապա վերջապես ամբողջ կերպարանքը. նա բժշկում է նաև մյուս վշտացյալներին: Նա 66 օր քարոզում է քրիստոնեական կրո-

նը, հին և նոր կառավարանը՝ իր մեկնու-
թյուններով և բոլորին հավատի է բերում:
Թագավորը միաժամ է Գրիգորին ընտրել
Հայաստանի եպիսկոպոս, ինչպես պատվի-
րել էր հրեշտակը: Մի պատվավոր շքա-
խումբ, 13 մեծամեծ նախարարների ու-
ղեկցությամբ Գրիգորին տանում է Կեսարիա՝
Թագավորի հրովարտակի հետ միասին, ու-
րով Կեսարացի Ղևոնդիոս միտրոպոլիտին
խնդրվում էր Գրիգորին եպիսկոպոս ձեռ-
նադրել Հայաստանի համար: Ձեռնադրու-
թյունը կատարվում է շքեղ: Վերադարձին
Գրիգորը մի քանի օր մնում է Սեբաստիա-
յում, որտեղից վերցնում է Հովհաննես
Մկրտչի և Աթանազիոսի վկայի մասունք-
ները, այլև քահանաներ Հայաստանի ապա-
գա եկեղեցիների համար: Երբ մտնում են
Հայաստանի սահմանները, Գրիգորը տաճար
է շինում Հովհաննես Մկրտչի անվան (Մշու-
սույթան տուրք Կարապետ): Տրդատը զոր-
քով ընդառն է գնում նրան. իրար հանդի-
պում են Եփրատ գետի ափին, որտեղ Գրի-
գորը մկրտում է Տրդատին, նրա կնոջն ու
քրոջը և մի քանի հարյուր հազար ժողո-
վուրդ՝ իշխաններից և հասարակ մարկան-
ցից: Վաղարշապատում Գրիգորը տեսիլք է
տեսնում. մի լուսեղեն այր, ոսկի մուրճը
ձեռքին, իջնում է երկնքից, հարվածում
գետնի այն տեղերը, որտեղ հիմնվեց էջ-
միածնի տաճարը և կույսերի վկայարաննե-
րը: Այնուհետև Գրիգորը փորձանում է կու-
քերի բազիլիկները, եկեղեցիներ շինում,
սպասավորներ նշանակում, դպրոցներ բաց
անում, քրմերի որդիներից քահանայացու-
ներ պատրաստում: Այնուհետև նա սկսում
է լեռներում առանձնանալ: Թագավորին
հայտնում են, թե Գրիգորը ամուսնացած է,
ուսի երկու որդի: Որովհետև Գրիգորը չէր
կամենում շարունակ աշխարհում մնալ և
հոտը կառավարել՝ Տրդատը հորդորում է
նրան՝ որոտը կանչել և նրանցից մեկին՝
Արիստակեսին եպիսկոպոս ձեռնադրել ե-
կեղեցին կառավարելու համար: Այդպես էլ
կատարվում է: Նա ձեռնադրում է նաև ու-
րիշ 13 եպիսկոպոս Հայաստանի զանազան
գավառների համար:

Տրդատը լուր է ստանում, թե Կոստան-
դիանոս կայսրը ևս ընդունել է քրիստոնեո-
թյուն: Գրիգորը Արիստակեսի հետ մեծ
շքախմբով գնում է Հռոմ Կոստանդիանոսին
շնորհավորելու: Այստեղ երկու թագավոր-
ները, Հռոմի Եփեսիոս պապը և Գրիգորը
իրար ողջունում են և բարեկամության ու
ուխտի դաշինք կապում: Հայաստանի վե-
րադառնալուց քիչ հետո տեղի է ունենում
Նիկիո ժողովը, որին մասնակցում է Արիս-

տակեսը և հետը բերում է ժողովի կանոն-
ները: Այնուհետև Գրիգորը ավելի սակավ է
երևում մարդկանց և հանգիստ վախճան-
վում է:

Այս է Ագաթանգեղոսի համառոտ բովան-
դակությունը: Բանասիրական քննադատու-
թյունը վաղուց ցույց է տվել, որ այս պատ-
մությունը գրել է ոչ թե ժամանակակից
Ագաթանգեղոս հոռմայեցի քարտուղարը,
որեմն երրորդ դարի վերջերին, այլ շատ
հետո, հինգերորդ դարի երկրորդ կեսին, որ
Ագաթանգեղոս հունարեն բառը ոչ թե անձի
անուն է, այլ գրվածքի, այսինքն նշանա-
կում է բարի ավետարեթ (ինչպես հոմանիշ
Եփեսեցիի բառն էլ նշանակում է ավետա-
րան): Այս և նման հարցերի վրա կանգ չեմ
առնում, որովհետև չարիշ մասնավոր հար-
ցերով պիտի զբաղվեմ:

Հայոց դարձի այս պատմությունը հայտ-
նի է և ուրիշ ազգերի մոտ, համառոտ կամ
ընդարձակ, տարբեր խմբագրություններով.
կա վերացերեն մի քանի վարիանտներով, ա-
սորոց, եթովպացոց լեզուներով, մա հունա-
րեն՝ հայերենից թարգմանված: Վերջապե-
ս. Մառը 1902 թվին Սինայ վանքում գտավ
Ագաթանգեղոսի աղագական խմբագրու-
թյունը, որ և 1905 թվին հրապարակեց. ու-
սերեն թարգմանությամբ, հանգեծ ընդար-
ձակ վերջաբանով՝ դնելով հետևյալ վերնա-
գիրը. «Врещение армян, грузин, асхазов и а-
ланов св. Григорием»: Սա հայոց դարձի վե-
րաբերյալ օտարազգի աղբյուրների մեջ
մենից ընդարձակն է (չհաշվելով հունարեն
թարգմանությունը) ու ամենից հետաքրքրա-
կանն ըստ բովանդակության: Տեղ-տեղ նա
ջատ նման է հայերենին, վարձեն թարգմա-
նություն լինի, բայց շատ տեղ բոլորովին
տարբեր հայերենից, ուստի համարվում է
ուրիշ աղբյուրից առաջ եկած:

Ձեռագիրն սկզբից թերի է, սկսվում է
Գրիգորի շարչարանքներից, չունի նաև Գրի-
գորի ընդարձակ վարդապետությունը. նա
ունեցել է վերնագիր՝ Վնահատակութիւն
ս. Գրիգորի, ս. Հռիփսիմէի, ս. Գայիանէի: Դ.
Հարկավոր է ցույց տալ գլխավոր տարբե-
րությունները հայերենի Ագաթանգեղոսի և
այս աղբյուրների մեջ:

Հայերենն ունի Տրդատ թագավորի երկու
հրովարտակներ՝ մեկը հայ ժողովուրդին՝
կուռքերը հարգելու մասին, մյուսը՝ քրիս-
տոնեություն դնել: Արաբները չունի սրան-
ցից և ոչ մեկը:

Արաբներն ունի Կոստանդիանոս կայսեր
հրովարտակը Տրդատին, որով սրան հրա-
վիրում է Հռոմ այցելել: Հայերենը չունի
այս:

Հայաստանի հեթանոսական կուսակցության անունները արաբերենում բերված են հուշարեն անուններով (ինչպես ունի և խորենացին), իսկ հայերենում նրանց անունները բերված են հայերեն:

Հայերենում պատմվում է, թե Գրիգորը երբեք չէր մկրտել Տրդատին, նրա ընտանիքը և բազմաթիվ հայերի: Արաբերենը պատմում է, որ Գրիգորը այս գետում Տրդատի և հայերի հետ միաժամանակ մկրտել է նաև վրաց, արևազայց և ալանների թագավորներին:

Հայերենում ասվում է, թե Գրիգորի շարժարաններից հետո հայտնվեց, որ նա Անակի՝ խոսքով թագավորին սպանողի որդին է: Արաբերենում չկա այս տեղեկությունը:

Հայերենում Կեսարիայի Ղևոնդիոս միտրոպոլիտի պատասխան նամակում Տրդատին պայման է դրվում, որ այնուհետև հայոց եպիսկոպոսները ձեռնադրություն ստանան Կեսարիայի աթոռից: Արաբերենում այս պայմանը չկա:

Հայերենում Գրիգորը ձեռնադրում է 13 եպիսկոպոս, բերվում են նրանց անունները և միայն երեքի վիճակները նշանակվում: Արաբերենում կան այս 13 եպիսկոպոսներն իրենց անուններով և բոլոր տասներեքի էլ վիճակների անուններով:

Արաբերենում Սեբաստիո Պետրոս եպիսկոպոսը բավական կարևոր դեր է կատարում Գրիգորի վերադարձի ժամանակ և նրան ուղեկցում է մինչև Հայաստան: Հայերենում չկան ոչ նրա անունը և ոչ գործերը:

Արաբերենը հիշում է, որ Գրիգորը ձեռնադրել է մի-մի եպիսկոպոս Վրաստանի, Աբխազիայի և Ալանների համար և տալիս է նրանց անունները: Հայերենը չունի այս տեղեկությունը ևս:

Ն. Մառը կարծում է, թե հայոց դարձի սկզբնական պատմությունը գրել է Մեսրոպ Մաշտոցը, որն ինչպես հայոց, վրաց և աղվանների համար այբուբեն ստեղծեց, այնպես էլ հայերին և այլ ազգերին միասին քրիստոնյա դարձնելով Գրիգորի ձեռքով նպատակ է ունեցել ամրացնել կուսատուական կապը այդ ազգերի մեջ: Մեսրոպի այս նախնական աշխատությունը կորած է, մեր ձեռքը չի հասել: Իր հրատարակած արաբերեն թարգմանությունը կատարված է անշուշտ հունարենից, որ նույնպես կորած է, իսկ այս հունարենն քնադրի հայերենը գրված է եղել հավանորեն մի քաղցրեղենիկ հայի ձեռքով՝ հայերի և վրացիների մեջ համեմատելով ստեղծելու նպատակով: Գրիգորը կուսավորչի ընդհան-

րացած պաշտամունքը Հայաստանում երևան է եկել ոչ վաղ, քան յոթնեորդ դարում, Հոփսիսի մի վկայարանի նորոգությունից հետո Կոմիտաս կաթողիկոսի ձեռքով (615—628) և այս ժամանակ երևան է եկել մեր այժմ ունեցած հայերեն Ագաթանգեղոսը, որ սաստիկ ազդայնացրած է. ի միջի այլոց նրանից դուրս են ձգված հիշատակությունները, թե Գրիգորը Տրդատ թագավորի հետ միասին մկրտել է վրաց, արևազների և ալանների թագավորներին: Այս հավանումն արված է, որպեսզի Գրիգորը կուսավորչը հանդիսանա միայն հայ ազգի կուսավորչի: Հայերեն Ագաթանգեղոսը ութերորդ դարի խմբագրություն է:

Այստեղ շոշափված կարևոր հարցերից ես կզբաղվեմ երկուսով. 1) ո՞ր դարից է մեր ձեռքը հասել Ագաթանգեղոսի հայերեն պատմությունը. 2) Գրիգորը կուսավորչը միայն հայերի է մկրտել, թե նաև վրաց, արևազների և ալանների թագավորներին:

Ինչպես տեսանք, Ն. Մառը գտնում է, որ Գրիգորը կուսավորչի ընդհանուր պաշտամունքը Հայաստանում տեղի է ունեցել ոչ վաղ, քան յոթնեորդ դարում, Հոփսիսի մի վկայարանի նորոգությունից հետո: Նա այնքան անվիճելի է համարում այս հայացքը, որ մինչև իսկ ասում է (եր. 154—155), թե այս ենթադրության հակառակ տեղեկություններ կան հայ հեղինակների մոտ և որ սրանք, նրա կարծիքով, ավելի կարևոր են այդ հեղինակների ժամանակները ավելի ներքև իջեցնելու համար, քան իբրև ապացույց կուսավորչի ընդհանուր պաշտամունքի հնություն: Այս ընդհանուր պաշտամունքի հետ կապված է հայերեն Ագաթանգեղոսի երևան գալը, որի ժամանակը և Ն. Մառը համարում է ութերորդ դարը:

Դժվար է համաձայնել Ն. Մառի այս կարծիքներին. նախ ոչ մի դրական ապացույց չկա, որ Հոփսիսի մի վկայարանի նորոգությունը Կոմիտաս կաթողիկոսի ձեռքով այսպիսի վճռական նշանակություն ունեցած լինելը կուսավորչի պաշտամունքի ընդհանրանալու վրա և երկրորդ՝ որ կուսավորչի ընդհանրացած պաշտամունքի անկասկած վկայությունները ունենք դեռ հինգերորդ դարից այնպիսի հեղինակների մոտ, որոնց ոչ մի հնար չկա իջեցնելու մինչև ութերորդ դարը, իսկ այս ընդհանուր պաշտամունքը, որ արդեն կար հինգերորդ դարում, ընկանապես պետք է ավելի զարգանար, անկախ Հոփսիսի մի վկայարանի նորոգությունից:

Ահա Կոնստանդին Գր. Կուսավորչին խոհան Մ. Խորենացին, որի ամեն մի խոսքը չափած-կշռած է: «Սա... յարեկից

կողմանց աշխարհիս մերոյ՝ արեւելք ճշմարիտ ծաղեալ մեզ և իմանալի արեգակն և հոգեւոր ճառագայթ, ի խորին շարութենէ կռապաշտութեան ելք, երանութեան և շինութեան հոգեւորի առիթ, աստուածային արդարեւ արմատնի, տնկեալ ի տան Տեառն և ի դաւիթն Աստուծոյ մերոյ ծաղկեալք (Ք. ՂԱ): Քիչ հետո նա կոչում է Լուսավորչին աստուծոյ և մեծ նահատակ, մերոյ լուսաւորութեան հոգեւոր վերակացու, նախաշաղիղ և լուսաւորութեանց նահապետ: Ղազար Փարպեցու մոտ Լուսավորչին արդեն կատարյալ ժողովրդական սուրբ է, նրան մի բանի տասնյակ անգամ հիշում է պատմութեան ընթացքում. նրա նշխարները սքանչելագործութիւններ են կատարում, նրան դիմում են աղոթքներով և խնդրվածք անում: Ղ. Փարպեցին Ագաթանգեղոսի պատմութեանը կոչում է Հայոց առաջին պատմութիւն, որի շարունակութիւնն է եղել և է իրոր Փաւլոստոս Բուզանդի պատմութիւնը:

Ավելի հետաքրքրական է Փաւստոս Բուզանդը, որ թեպետ Հայոց դարձի պատմութեանը չի գրել, բայց իր պատմութեան մեջ, տեղը եկած ժամանակ, այնքան տեղեկութիւններ է հաղորդում այս դարձի մասին, որ կարծես մարդ համառոտ Ագաթանգեղոս է կարդում: Հարկավոր ենք համարում համախմբել այստեղ Փաւստոսի հաղորդած տեղեկութիւնները Ագաթանգեղոսից, մի կողմից ցույց տալու համար, որ մեր աշխարհի Ագաթանգեղոսը ծանոթ է եղել Փաւլոստոսին և մյուս կողմից ցույց տալու համար, որ նրան ծանոթ Ագաթանգեղոսը հենց մեր ունեցածն է և ոչ արաբերենին բնագիր համարված Ագաթանգեղոսը: Այս տեղեկութիւնները ես բերում եմ իմ մի հոգւածից, որ 50 տարի առաջ (1896 թվին) տպագրվեց Վիեննայի «Հանդէս ամսօրեայ»-ում, «Ուսումնասիրութիւն Փաւստոս Բուզանդի» վերնագրով:

Փաւստոսի և Ագաթանգեղոսի համեմատութիւնից երևում է, որ Փաւստոսը գիտե, որ Սասանյան Արտաշիրն սպանել է պարսից Պահլավունի թագավորին, որի պատճառով հզոր արշակունիները վրեժխնդիր են եղել նրանցից (Փաւ. Դ, ԺԴ, Ագաթ. Ա.—Բ), որ ս. Գրիգորը Անակի որդին է (Փ. Գ. Բ.—ԱԳ. ԺԵ), որ Գրիգորը չարչարվել է հայերի կողմից քրիստոնեւթեան պատճառով (Փ. Գ. ԺԳ. ԻԳ), որ Գրիգորի չարչարանքներից հետո Հայաստան են եկել Հոփսիմյան կույսերը, չարչարվել ու նահատակվել (Փ. Դ., ԺԴ, Ագաթ. ԺԳ, ԺԲ), որ թագավորն անասնական կերպարանք է ասացել, որ և առիթ է եղել հայոց դարձին (Փ. Գ. Ա. Բ.—Ագաթ.—Ի), որ Գրիգորը քա-

րողել, վարդապետել է հայոց (Փ. Գ. Ա. Բ.—ԱԳ.), որ Քրիստոսի նախավաներ Գայիանէի, Հոփսիմի և նրանց զործակիցների վրա վկայարաններ են շինել Այրարատյան գավառում (Փ. Գ. 1—ԱԳ. ԺԺԲ), որ սովորութիւն է եղել կաթողիկոսների ձեռնադրութիւնը կատարել Կեսարիայում (Փ. Գ. ԺԲ, ԺԳ.—ԱԳ. ԺԺԳ, ԺԺԶ), որ ս. Գրիգոր սքանչելիքով կործանել է մահյանները Տարոնի Աշտիշատում (Փ. Գ. ԺԲ, ԺԳ. ԱԳ. ԺԺԴ, ԺԺԵ), որ նա այստեղ շինել է հայոց առաջին եկեղեցին ս. Հովհաննէս Մկրտչի անունով (Փ. Գ. Ժ.—ԱԳ. ԺԺԴ), որ այստեղ՝ հացեաց դրախտում առաջին անգամ մկրտութիւն է կատարել և ձեռնադրութիւն արել (Փ. ԺԳ.—ԱԳ. ԺԺԵ), որ ս. Գրիգորը պատվիրել է տարեց տարի տոնել սրբերի հիշատակը (Փ. Գ.—ԱԳ. ԺԺԵ), որ Տրդատ եկեղեցուն հատկացրել է յոթը յոթը հող (Փ. Գ.—ԱԳ. ԺԺԶ), որ ս. Գրիգոր քաշվել է անապատ Շոնելու (Փ. Ա. ԺԶ.—ԱԳ. ԺԻԳ), որ նա ունեցել է երկու որդի, Վրթանէս և Արիստակէս (Փ. Գ. Բ.—ԱԳ. ԺԻԳ), որ կրտսեր որդին՝ Արիստակէսը ձեռնադրվել է ս. Գրիգորից և զործակից է եղել հորը (Փ. Գ., Ի.—ԱԳ. ԺԻԳ), որ Տրդատ թագավորը և Կոստանդիանոս կայսրը դաշն են կռել քրիստոնեական հավատի միջնորդութեամբ (Փ. Գ. ԻԱ.—ԱԳ. ԺԻԶ), որ հրեշտակն սպասավորելիս է եղել Կոստանդիանոսին (Փ. ԺԳ.—ԱԳ. ԺԻԵ), որ նիկիո ժողովն է գնացել Արիստակէսը, Գրիգորի որդին (Փ. Գ.—ԱԳ. ԺԻԶ):

Այսպես, ուրեմն, Փաւստոսի տեղեկութիւններից, որ պատահաբար ցրված են նրա պատմութեան զանազան տեղերում, տեսնում ենք, որ նա ծանոթ է եղել ամբողջ Ագաթանգեղոսին, նա ծանոթ է հատկապես հայերեն Ագաթանգեղոսին. օրինակ՝ նա գիտե, որ Գրիգորը Անակի որդին է, մի տեղեկութիւն, որ արաբերենը չունի, այլ միայն հայերենը: Նույնպես հայերենն ունի պայման, որ հայոց եպիսկոպոսները ձեռնադրութիւն տաւան Կեսարիայի աթոռից, որ դարձյալ չունի արաբերենը:

Դեռ ավելին էա: Փաւստոսի պատմութեանը ապացույցներ ունի, որ հեղինակը ծանոթ է մեր աշխարհի ունեցած Ագաթանգեղոսին և ոչ թե մի ուրիշ խմբագրութեան. սրա համար կան բավական հատկանշանքներ կու գրվածքների մեջ, որոնք բառացի նման են իրար: (Բառացի նմանութիւնները չարված են շեղագրով): Այսպես՝

«Ժողով էր սու ինքն զբազմութիւն եպիսկոպոսացն... զի ձեռնադրեսցեն զսուրբն Ներսէս» (Դ. Դ.):

«Եւ բազում նեղելոց և տառապելոց գե-

րեաց փրկութիւնն և գերեզարծ առնէր, զորս անիւ քարոզութիւն փառացն Քրիստոսի (Գ. դ.): (Այստեղ Փառաստափ բնագիրն աղա-վաղւած է. դրված է «զորս» բառը, փոխա-նակ Ազաթանգեղոսի «Կորդելով զնոսա» բառերին):

«Ժողովել ի յիշատակ սրբոցն, որ լանդ, կատարել անդ ամի ամի եօթն անգամ... ամի ամի ժողովեալ զոր տօնին խմբեալ ցնծային, (Գ. դ.):

«Ջաւետարանական ընթացսն և զվերա-

կացութիւն եկեղեցւոյ սրբոյ... պահօք և ա-ղօթիք և ուժգին խնդրուածօք» (Գ. դ):

«Ձի յառաջ նախ անդ շինեալ էր զսուրբ եկեղեցին և ուղղեալ սեղան յանուն տեառն» (Գ. ժդ.):

«Ջուխտն յիշեալ զդաշանցն կոելոյ... միջնորդութեամբ ի մէջ կայսերն Կոստան-դիանոսի և ի մէջ թագաւորին Տրդատայ» (Գ. իա.):

Եւ բազմացոյց զկարգս պաշտօնէից յա-մենայն տեղիս իշխանութեան ի սահմանացն



Ս. Հոփսիմեի վանքը.

Հայոց և յամենայն զաւառս կացոյց տե-սուշս եպիսկոպոս, (Ե. իա.):

«Հանդերձ սարմոսիւք և օրհնութեամբ, կանքեղօք վառելով և մեծա [ւ] պաշտ-մամբ և բազում յիշատակօք զսուրբն յու-ղարկեցին» (Ե. իա.):

Այս համեմատութիւններից անմիջեւի կերպով հետևում է, որ Փառաստա հինգե-րորդ դարի յոթանասնական թվականներին ծանոթ է եղել հայերեն Ազաթանգեղոսի պատմության և հենց այն խմբագրության, որով հասել է նա մեր ձեռքը, իսկ Փառաս-տոսն ու նրան հաջորդող Մովսէս Խորենա-ցին և Ղազար Փարպեցին, անտարակույս, հինգերորդ դարի հեղինակներ են, նրանց

ութերորդ կամ իններորդ դարն իջեցնելու ոչ մի հնարավորություն չկա: Իմ մի զեկույց-ման մեջ («Ժամանակագրական հարցեր հա-յոց հին մատենագրութեան մեջ»), որ տպա-գրվեց Ակադեմիայի տեղեկագրում (1944 № 6, 7), ես ցույց էի տվել, թե մեր ունեցած Ազաթանգեղոսի հայերեն խմբա-գրությունը կատարված է 461—465 թվա-կաններում, հավանորեն, Գյուտ կաթողիկո-սի ձեռքով:

Նույն հայացքին մնում եմ և այսօր:

Գալիս եմ երկրորդ հարցին՝ արդյո՞ք Գրի-գոր Լուսավորիչը միայն Տրդատ թագավորին և հայերի՞ն է մկրտել, ինչպիսի ունի հայերին Ազաթանգեղոսը, թե Տրդատի հետ միաժա-

մանակ նաև վրաց, արքայազների և աշաններ-
րի թագավորներին, ինչպես ունի արաբներն-
նը: Ն. Մառը, ինչպես վերը հիշվեց, վավե-
րական է համարում արաբական բնագրի
վերսխան: Նա կարծում է, թե Մեսրոպ Մաշ-
տոցի խմբագրած Գրիգորի վարքն ու դարձը
թեպետ կորած են, բայց նրա գրած պատ-
մական իրողությունը՝ չորս ազգերի թագա-
վորների միաժամանակ մկրտությունը Լու-
սավորչի ձեռքով՝ շարունակվել է պահպան-
վել, քանի որ այս ազգերը մի դավանու-
թյուն ունեին: Իսկ երբ յոթնեորդ դարում
բաժանում տեղի ունեցավ հայերի ու վրա-
ցիների եկեղեցիների մեջ, երբ վրացիք Կյու-
րիոն կաթողիկոսի ժամանակ քաղքեղոնա-
կան դարձան, իսկ հայերը հաստատվեցին
հակաքաղքեղոնականության մեջ, հայերը
ցանկանալով որ Լուսավորչի ազգայնաճա-
միայն հայ ազգի Լուսավորչի դատնա,
պատմությունից դուրս ձգեցին բոլոր այն
տեղեկությունները, որոնք սկզբնապես գո-
յություն ունեին երկու խմբագրությունների
մեջ՝ չորս ազգերի թագավորների միաժա-
մանակ մկրտության մասին Գրիգոր Լու-
սավորչի ձեռքով: Սրանով խզվում էր որևէ
կապ հայերի և այս երեք ազգերի քրիս-
տոնություն ընդունելու մեջ: Մառը
այնքան հաստատ համոզված է այս կար-
ծիքի մեջ, որ իր ձեռքի տակ եղած արա-
բական ձեռագրի վերնագիրը փոխել է. ար-
աբերենի վերնագիրն եղել է «Նահատա-
կութիւն ս. Գրիգորի, ս. Հովսիսիմէի և ս.
Գայիանէի» (էջ. 67), այնինչ Ն. Մառը իր
հրատարակած թարգմանության վերնագիր
է դրել «Մկրտութիւն հայերի, վրացիների,
արքայազների և աղվանների ս. Գրիգորի
ձեռքով»:

Իհարկե, Ն. Մառի կարծիքը ոչ միայն
անկարելի չէ, այլև հնարավոր է և հավա-
նական: Բայց կարող է լինել և հակառակ
ենթադրություն, այսինքն թե Գրիգորը
մկրտել է միայն Տրդատին և հայերին, ինչ-
պես ունի հայերեն Ագաթանգեղոսը, իսկ
արաբերենի մեջ մյուս երեք թագավորների
հիշատակությունը միջանկյալ, հետաժողով
հավելված է, որ կատարված է որոշ դիտա-
վորությամբ: Այսպես թե այնպես՝ ներկա
ղեպքում տեղի է ունեցել դիտավորյալ
խմբագրական փոփոխություն՝ կա՛մ հայե-
րենից ջնջված է օտարազգի թագավորների
հիշատակությունը, կա՛մ արաբերենում
հետո է ավելացված այս հիշատակությու-
նը: Մանրամասն բաղդատությունը և քն-
նությունը կարող են ցույց տալ, թե այս

երկու ենթադրություններից ո՞րն է ուղիղը,
իրականը:

Այս նպատակով քննելով երկու խմբա-
գրությունները՝ տեսնում ենք, որ երեք ազ-
գերի թագավորներն արաբերենում երևան
են գալիս միայն երեք անգամ: Նա կարևոր
եմ համարում այս երեք տեղերն էլ բերել
հայերեն՝ Ն. Մառի արաբերենի թարգմա-
նությունից:

Առաջին անգամ այս երեք թագավորները
հիշվում են էջ 113-115-ում, որտեղ ասված
է. «Երբ Տրդատ թագավորը Վաղարշապատ
հասավ, հրամայեց իր թագավորության
գրիչներին իր մոտ գալ, և հրամայեց գրել
թղթեր իր թագավորության բոլոր ժողովուր-
դին, որ ներկայանան մեծամեծները, պետե-
րը, իշխանները Վաղարշապատ քաղաքում
(թղթեր արխագների քաղավորին, վրաց
քաղավորին, քուրք ալանների քաղավորին)
և թղթերում բացատրեց ինչ որ իրեն պա-
տահել էր, և ասաց. «պետք է, տրեմն,
դուք շուտով գաք ինձ մոտ»: Եվ հենց որ
թղթերը տեղ հասան, եկան նրա մոտ (երեմ
քաղավորները՝ արխագների, վրաց և ա-
լանների քաղավորները և նրանց հետ),
իշխանների բազմությունը. առաջին՝ Ան-
գեղի իշխանը, երկրորդ՝ Արտաշատի իշ-
խանը... տասնվեցերորդ՝ Տարոնի պետը»:
Քիչ հետո շարունակվում է այսպես. «Գա-
լիս են փշխանները. Տրդատը նրանց պատ-
մում է իր գլխին եկած փորձանքները,
Գրիգորի շարժարանքները, կույսերի նա-
հատակությունը, և ապա հարցնում է՝ քիչ
է նրանց կարծիքը: Այս ժամանակ իշխան-
ները և բոլոր հայերը ուրախությամբ ա-
ղաղակեցին. «Եկանք Գրիգորին, կհավա-
տանք նրա խոսքին»:

Երկրորդ անգամ երեք օտար թագավոր-
ները հանդիպում են իրար. էջ 133-ում
գրված է. «Եվ երբ Տրդատ թագավորը լսեց,
թե սուրբ Գրիգորը եկել է, վերցրեց իր
հետ Աշխեն կնոջը, Խոսրովիդուխտ քրոջը.
(Վրաց քաղավորին, ռուսաց քաղավորին,
ալանների քաղավորին), յուր գորապետնե-
րին, իշխաններին, ժողովրդի պետերին,
և նրանք գնացին սուրբ Գրիգորին՝ ընդառաջ
և ողջունեցին: Շարունակության մեջ աս-
ված է. «և նա սկսեց եկեղեցիներ շինել,
նրանց մեջ քահանաներ դնել ս. Գիրքը
գիրացողներից, ոմանց ուղարկեց Վրաս-
տան, ոմանց արքայազների երկիրը և ոմանց
ալանների մոտ» (եր. 135):

Երրորդ անգամ օտար թագավորները
հանդիպում են մկրտության ժամին. էջ 135,
որտեղ գրված է. «Երբ աղոթքի երեսուն օրը

լրացավ, հոգևորականները նրա մոտ եկան, նա վերցրեց բոլոր ժողովուրդը և գնաց Եփրատ գետի մոտ, արքունի Բագավան քաղաքի մոտ, որոնց թիվն էր 370,000 մարդ. Տրդատ թագավորը (աբխազների թագավորը, վրաց թագավորը, ալանների թագավորը) և բոլոր իշխաններն ու ժողովուրդները և ցեղերի ու տոհմերի մեծամեծները, բոլոր նրանց հպատակները, ծառաները, տղամարդիկ, կանայք և երեխաներ... Գրիգորը գետափին կանգնած՝ նրանց հրամայեց զգեստները հանել, նախ և առաջ Տրդատ թագավորին (նրա հետ երեք թագավորներին) և նրա իշխաններին, որոնց օրհնեց մյուսուրիշ ու խաշով։

Ահա՛ այն բոլոր տեղերը, որտեղ հիշատակված են օտար թագավորները (մի անգամ նույնիսկ ռուսաց թագավորը՝ փոխառակ աբխազների)։

Ով ձեռագրերի հետ գործ է ունեցել, նա իսկույն կնկատե, որ այս բոլոր տեղերում էլ օտար թագավորների հիշատակությունը միջանկյալ է, հետո ավելացրած։ Սա դիտմամբ այս հիշատակությունները փակագծերի մեջ դրի և շղապագրությամբ շարեցի. ով որ կարդա առանց դրանց, նա կտեսնի, որ լեզուն, պատմության ընթացքը բոլորովին չեն փոխվում, այլ ընդհակառակն, ավելի կոկվում և բնական են դառնում։ Սա նշան է, թե թագավորների հիշատակությունը հետո է ավելացրած, որ և խանգարում է խոսքի բնական ընթացքը։ Միայն այս փաստը բավական է ցույց տալու օտար թագավորների հիշատակության անհարազատությունը, որ նրանք սկզբնապես չեն եղել։ Բայց կան ուրիշ շատ փաստեր, որոնք նույն բանն են ապացուցանում։ Արդարև, Կերեք ազգերի թագավորները, որոնք երեքական՝ անգամ հիշվում են, բայց տարօրինակ կերպով ոչ մեկի անունը չի բերված. նրանք ոչ մի խոսք չեն ասում, ոչ մի բան չեն անում։ Կարծես Տրդատի հյուս, անխոս հպատակները լինին, որոնք Տրդատի հրամանով հանկարծ բեմի վրա երևում են և անզգալի կերպով անհետանում։ Նրանք գործող անձեր չեն, այլ թատրոնական բեմի համար ստատիստներ։ Արաբները հիշում է (եբ. 137), որ Գրիգորը ձեռնադրել է երեք եպիսկոպոս՝ Վրաստանի, աղվանների և մի անհայտ տեղի վրա, և հիշում է այդ եպիսկոպոսների անունները, իսկ այս երեք օտար թագավորների անունները ոչ մի անգամ չի հիշում։

Որ այս երեք թագավորները նորամուծ են, երևում է նաև ուրիշ հանդամանքներից՝

հենց արաբներն խմբագրության մեջ։ Վերը բերված առաջին օրինակում տեսանք, որ Տրդատը հրամայում է նամակներ գրել երեք ազգերի թագավորներին, իր երկրի իշխաններին. երբ նրանք հավաքվում են, Տրդատը պատմում է նրանց պատահած եղելությունները, Գրիգորի գործերը և հարցնում. «Ի՞նչ է ձեր կարծիքը այս մասին»։ Այն ժամանակ, — պատմում է արաբներին, — իշխաններն ու բոլոր հայերը լցվեցին երկյուղով և ուրախությամբ ու իսկույն աղաղակեցին. «Կյանք Գրիգորին, կհավատանք նրա խոսքին»։ Իսկ ո՛ւր մնացին երեք թագավորները, որոնք Տրդատի հարցին ոչինչ չպատասխանեցին, չէ՞ որ նրանք էլ ունեին իրենց հավատը, աստվածները, նրանք կամ պետք է պաշտպանեին փրենց հավատը, կամ, հայ իշխանների նման, հավատային Գրիգորի վարդապետության։ Բայց ոչ մեկը, տշ մյուսը, նրանք լուռ են, որովհետև շինծու են, խմբագիրը մոռացել է նրանց։

Այս տեղից մի քիչ առաջ (էջ. 101) հրեշտակը Գրիգորի տեսած տեսիլը մեկնելիս ասում է. «Իսկ ոսկե սկուտեղները, որ դու տեսար խաչերի հետ, որոնք մեկաված էին նրանց մեջ, նշանակում են, որ ամբողջ հայոց երկրում կկառուցվեն եկեղեցիներ ու խաչեր և կփայլեն բոլոր երկրում»։ Այստեղ միայն Հայոց աշխարհն է հիշվում, իսկ օտար թագավորներին ոչ։ Մի քիչ հետո (էջ 113) ասված է. «Եվ նա (Գրիգորը) Հայաստան երկրում բոլորին դարձրեց զեպի ճշմարիտ աստվածապաշտությունը», որտեղ դարձյալ չկա, օտար երկրների դարձը։ Գրքի բուն վերջում (էջ 148) արաբներն ունի. «ս. Գրիգորը շուտով լուսավորեց ամբողջ Հայաստանը, բայց դարձյալ ոչ մի խոսք մյուս ազգերի մասին»։

Նույնն են վկայում նաև պատմական ավանդությունները։ Վրաց պատմական գրականության մեջ Գրիգորը ճանաչված է իբրև հայերի լուսավորիչ, բայց ոչ նաև վրաց։ Մասը տասներորդ դարի մի ձեռագրից բերում է մի շարական (неспопение), որի մեջ հին վրացիները դիմում են ս. Գրիգորին, որ հայոց աշխարհը լցրել է աստվածային վարդապետության ուսումով. «Ո՞վ ասող Հայաստանի», ասված է երգում, «հիշիր մեզ, քո հոտին Փրկչի առաջ և շնորհի մեզ խաղաղություն երկրի վրա»։

Բայց ամենից շատ կարևորություն ունի այս հարցի նկատմամբ վրաց ազգային ավանդությունը քրիստոնեություն ընդունելու մասին, նրանց պաշտամունքը վրաց առաքելուհի սրբուհի Նունին, որի պատմու-

թյունն արել է Սոկրատ Սքուաստիկոսը (հինգերորդ դար), առնելով Ռուփինոսից, որին պատմել է Բակուրը։ Նույնը վկայում է և Մ. Խորենացին (Բ. գլ.) այս աղբյուրն էրից անկախ աղբյուրից, որովհետև պարունակում է ճիշտ նկարագրություն տեղերի, ուր տեղի են ունեցել անցքերը։

Ահա այս պատմություն համառոտ բովանդակությունն ըստ Խորենացու։ Մի կին, Նունն անունով, Հռիփսիմյան կույսերի ընկերուհիներից, որ փախստական ընկել էր Վրաստան՝ նրանց Մծխեթա մայրաքաղաքը,

ճգնություններով ստանում է բժշկության շնորհք, բժշկում է շատերին, որոնց թվում նաև վրաց թագուհուն։ Նրան հարցնում են՝ ու՞մ միջոցով է անում բժշկությունը և նա պատմում է Քրիստոսի մասին։ Նրան լսում են հաճությամբ։ Վրաստան լուր է հասնում Հայաստանում Տրդատի, մեծամեծների և կույսերի հետ պատահածի մասին, որը լսելով ավելի են ծանոթանում հայոց դարձի պատմության։ Մի անգամ վրաց Միհրան թագավորը գնում է որսի. ճանապարհին խոտն լեռների մեջ սաստիկ թանձր միգ է



Ս. Գալիանի վանքը.

պատում. Թագավորը մոլորվում է, ընկնում երկյուղի մեջ, թե մի գուցե իրեն էլ պատահի Տրդատին հասած աղետի նման մի բան։ Ուստի է անում, որ եթե ապահով ազատվի՝ կընդունի Նունի քարոզած հավատը։ Նա ազատվում է և իր ուխտը կատարում։ Նունեն հավատարիմ մարդ է ուղարկում Գրիգորի մոտ, հայտնելով, թե վրացիք հոգաբարձությամբ ընդունում են քրիստոնեությունը, ինքը ի՞նչ պիտի անի։ (Սոկրատի պատմելով Նունեն դեսպան է ուղարկում ոչ թե Գրիգորի, այլ Կոստանդիանոս կայսեր մոտ)։ Ս. Գրիգորը պատվիրում է կռաքելը կործանել

և նրանց տեղը խաչ կանգնեցնել երկրպագության համար։ Այնուհետև Նունեն քարոզում է քրիստոնեությունը Վրաստանի մի քանի գավառներում և դարձի է բերում, որի պատճառով Խորենացին նրան անվանում է վրաց առաքելուհի։

Այս պատմությունից երևում է, որ դեպքը տեղի է ունեցել Տրդատի ու.ս. Գրիգորի կենդանության ժամանակ, հայերի մկրտությունից հետո, բայց տեսնում ենք, որ վրաց թագավորը Գրիգորի մկրտվածների մեջ չի հղել, այլ իր համար ապրել է Վրաստանում հեթանոսական կրոնով։ Այստեղ կա թագա-

վորի անուն՝ Միհրան, կա մայրաքաղաքի անունը՝ Մոսկովա, ձիշտ տեղագրություն՝ մի մեծ և մի փոքր գետերի միջև (Կուր և Արաքս)։ Պատմությունը շատ իրական կերպարանք ունի և միանգամայն հակասում է արաբներին Ագաթանգեղոսին, այսինքն ցույց է տալիս, որ Գրիգորը Տրդատի հետ միաժամանակ չի մկրտել վրաց թագավորին։

Վերջապես Մ. Խորենացին, որ անտարակույս ծանոթ էր հայ Ագաթանգեղոսին և արաբների բնագիր հայերենին, պարզ վկայում է, թե Գրիգորը հայոց աշխարհի լուսավորիչն է եղել և ոչ ուրիշ ազգերի։ Նա ասում է. «Հայոց մեր Գրիգորիս... յետ լուսաւորելոյ զամենայն Հայս լուսով աստուածգիտութեան... սիրեաց զլեւինս»։ Նթն նա ձեռքի տակ ունենար արաբներն նման մի բնագիր, վրաց, աբխազների և ալանների թագավորների մկրտության հիշատակությամբ, նա անշուշտ կգրեր, «յետ լուսաւորելոյ զամենայն հայս, զվիրս և զաղուանս», որովհետև Գրիգորի համար ոչ մի նվաստություն չէր լինի, եթե նա լիներ ոչ միայն հայերի, այլև հարևան երկրների լուսավորիչը։

Հիշենք նաև, որ Ն. Մառը վերջաբանում մեջ է բերում աղբյուրների՝ վրաց, աբխազների և ալանների քրիստոնեության ընդունելության մասին, բայց նրանցից ոչ մեկը չէ արդարացնում արաբներին տեղեկությունը, որ այս հարցում մենակ է մնում։

Վերը դրածներից գալիս եմ հետևյալ եզրակացություններին.

1) Մեր ունեցած հայերեն Ագաթանգեղոսը ոչ թե ութերորդ դարի խմբագրություն է, այլ հինգերորդ դարի վաթսուհեակն թվականների, հավանաբար Գյուտ կաթողիկոսի շարադրած, որովհետև այս Ագաթանգեղոսին շատ լավ ծանոթ էին Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցին, առաջման հինգերորդ դարի հեղինակները։

2) Հիմնական տարբերությունը հայերեն Ագաթանգեղոսի և արաբական խմբագրության մեջ, — այսինքն որ ըստ հայերենի՝ Գրիգորը մկրտել է միայն Տրդատ թագավորին և հայերին, իսկ ըստ արաբականի՝ միաժամանակ մկրտել է նաև վրաց, աբխազների և ալանների թագավորներին, — պետք է բացատրել այն մտքով, որ հարազատ վավերական բնագիրն է հայերենը, իսկ արաբականի սկզբնական աղբյուրում (հունարենում կամ հայերենում) այս օտար թագավորների հիշատակությունը չի եղել, այլ ավելացվել է հետո, մոտավորապես յոթներորդ դարում, երբ հայոց և վրաց եկեղեցիների միջև պառակտում ընկավ։ Ես համաձայն եմ Ն. Մառի

հետ, որը կարծում է թե արաբներին սկզբնագիր հայերենը կաղմել է մի հայ քաղաքագետական, բայց ոչ այն նպատակով, որ այս ազգերի մեջ եղբայրական եկեղեցական միության գաղափարն ստեղծեր, որ արդեն ուղ էր եկեղեցիների անջատումից հետո, այլ մի ուրիշ՝ ավելի պարզ ու դործնական նպատակի համար։ Քանի որ այս ազգերի եկեղեցիները բաժանված չէին, մի էին, Գրիգոր լուսավորիչը բնականապես ճանաչվում էր իբրև ընդհանուր լուսավորիչ այս բոլոր ազգերի համար, բայց երբ եկեղեցիները բաժանվեցին և լուսավորիչը դարձավ միայն հայոց ազգային լուսավորիչ, անծանոթ քաղաքագետիկ հայը չէր կարող հաշտվել այն մտքի հետ, որ իրանք զրկվում են այնքան հռչակված, ընդհանուր պաշտամունքի առարկա դարձած սրբից։ Սրա առաջն առնելու մի հնար կար, որ Գրիգորը միաժամանակ մկրտած լիներ չորս ազգերի թագավորներին, որով նա այնուհետև ևս կմնար դարձյալ օտար ազգերի լուսավորիչ, չնայելով եկեղեցիների բաժանման։ Այս նպատակով նա մոռնել է իր խմբագրած Ագաթանգեղոսի մեջ երեք ազգերի դարձի պատմությունը, որպեսզի քաղաքագետական հայերն էլ, վրացիներն էլ նույնքան իրավունք ունենան Գրիգորին իրանց լուսավորիչ անվանելու, որքան և հայերը։ Այս փոփոխությունը նա կատարել է այնքան անհամու կերպով, որ հարևանցի քննությունն անգամ երևան կհանե կեղծիքը։

Հակառակ ենթադրությունն անելը, այսինքն ընդունել, որ դարձի սկզբնական բնագիրը պարունակելիս է եղել չորս ազգերի թագավորների միաժամանակ մկրտությունը Գրիգորի ձեռքով, որ հայերը Գրիգորին ազգայնացնելու նպատակով դուրս են ձգել երեք օտար թագավորների հիշատակությունը, այս ոչ միայն անընդունելի է, այլև անհավանական։ Անընդունելի է այն պատճառով, որ աննպատակ ու աննպատակ կլինեին Գրիգորի համար ընթե նա, մնալով Հայաստանի լուսավորիչ, միաժամանակ մկրտած լինեին նաև մյուս երեք ազգերի թագավորներին, սրանով նրա մեծությունը բնավ չէր պակասի, այլ կավելանար, ուստի հաղթել թե խելքը դիմին մի հայ կամենար նսեմացնել Գրիգորի գործի ծավալը։ Իսկ անհավանական է այն պատճառով, որ ութերորդ, ինչպես կարծում է Ն. Մառը, կամ թեկուզ տասներորդ դարում, Ագաթանգեղոսը տարածված էր Հայաստանի բոլոր անկյուններում բազմաթիվ օրինակներով. ո՞վ կարող էր այս բոլոր տեղերը շրջել, ձեռագիրներ ձեռք բե-

րել, նրանց մեջ օտար թագավորների հիշատակությունները ջնջել, և ո՞ր ձեռագրատերը թույլ կտար իր տան սրբությունը եղծանել: Մեր ձեռքը հասել են բազմաթիվ Ագաթանգեղոսների, մի քանիսը մինչև ութ հարյուր տարվա հնություն, բայց ոչ մեկի մեջ այսպիսի կրճատման ոչ մի հետք չկա:

Թլուրիմացության առաջն առնելու համար պետք է ավելացնենք, որ իմ քննությունից դուրս է մնում վրաց և հարևան ազգերի քրիստոնեությունն ընդունելու հարցը, որ ամենայն հավանականությամբ կատարված է նույն Գրիգորի անձնական քարոզությամբ և նրա ձեռնադրած ֆախսկոպոսների ջանքերով, որ վկայում է նաև հայերեն Ագաթանգեղոսը՝ ցույց տալով Գրիգորի քարոզության ընդարձակ գավառները՝ շատ նման առաքելուհի Նունեի քարոզած գավառներին: Ես միայն շոշափեցի շորս ազգերի թագավորների միաժամանակ մկրտության հարցը Գրիգորի ձեռքով և աշխատեցի ցույց տալ, որ այս հարցում հարազատ է սկզբնական հայերեն Ագաթանգեղոսը, իսկ արաբականը կրոն է հետո ավելացրած ընդմիջարկություններ:

Հայոց դարձի արաբական խմբագրությունը և երեք օտար թագավորների հիշատակությունը կարելի է բացատրել նաև քաղաքական նպատակով: Առհասարակ տարօրինակ է թվում հայոց դարձի պատմությունը մահմեդական արաբացոց լեզվով, ի՞նչ նպատակով է նա գրված և ո՞ւմ համար, երբ արդեն գոյություն ունեին սրա հունարեն, հայերեն բնագիրը, վրացական խմբագրությունները

յոթներորդ դարի առաջին կեսին, երբ արաբներն ղեռ տարածված չէր, արևելքում միջազգային լեզու չէր դարձած, ինչպես հետագա դարերում: Այսպիսի վաղ ժամանակ արաբներն թարգմանությունը կարող էր սահմանված լինել մի հեղինակավոր արաբ իշխանավորի ներկայացնելու համար՝ իբրև վավերական գրավոր ապացույց, թե վրացիք, ալանները ևս նույնպես քրիստոնյա են, նույն Գրիգոր Լուսավորչից մկրտված, ուստի և միևնույն պայմաններում պետք է ապրեն, ինչպես և հայերը: Հայտնի է, որ հայ նախարարները Թեոդորոս Ռշտունու առաջնորդությամբ մի շատ ձեռնտու պայման կընթեցին արաբացոց հետ: Արդ՝ արաբական խմբագրությունը կարող էր նպատակ ունենալ, որ վրացիք և ուրիշներն էլ նույնպիսի պայմաններով կապվին արաբների հետ: Ըստ երևույթին այս նպատակն արդարանում է. Թեոդորոս Ռշտունուն հանձնվում է Հայաստանի և հյուսիսային երկրների կառավարությունը, մինչև Ճորա պահակը (Դերբենդը), ուրեմն հյուսիսային երկրներն էլ վիճակակից են դառնում հայերին: Գուցե միևնույն փափկանկատությունը արաբներն ունեւ դուրս է ձգված տեղեկությունը, որ հայոց եպիսկոպոսները ձեռնադրությունը պետք է ստանան Կեսարիայի աթոռից, որպեսզի այսպիսով խզվի եկեղեցական կապը հայերի և հույների միջև:

Այս եզրակացությունը, իհարկե, ենթադրություն է, բայց զուրկ չէ հավանականությունից:

